ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 14

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 17-Ի ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

ք. Երևան

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀՖՖ) Կարգապահական և էթիկայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նիստը (այսուհետ՝ Նիստ) կայացավ 2023թ. մայիսի 17-ին, ՀՀ, ք. Երևան, Խանջյան 27 հասցեում:

Նիստին մասնակցում էին՝

Կոմիտեի անդամներ

Կարեն Հովհաննիսյան	Կոմիտեի նախագահ
Հայկուհի Ռշտունի	Կոմիտեի անդամ, Կոմիտեի քարտուղար
Բաբկեն Ղալոյան	Կոմիտեի անդամ
Տիգրան Իսրայելյան	Կոմիտեի անդամ

Կոմիտեի նիստին մասնակցում են Կոմիտեի անդամներից 5-ը, հետևաբար, ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) 7-րդ հոդվածի 7.01 կետի համաձայն՝ Կոմիտեն իրավազոր է:

Նիստն արձանագրում է Կոմիտեի քարտուղար Հ. Ռշտունին:

Կոմիտեի նախագահը ներկայացրեց Կոմիտեի նիստի օրակարգում ընդգրկված՝ ներքոնշյալ հարցերը:

Կոմիտեն, ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 3-րդ հոդվածով, 4-րդ հոդվածով, 5-րդ հոդվածով, 20-րդ հոդվածով, 21-րդ հոդվածով, 28-րդ հոդվածով և Կանոնակարգի այլ վերաբերելի հոդվածներով՝ օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ կայացրեց հետևյալ որոշումները.

1. **02.05.2023թ.-ի «Վան»-«Ուրարտու» (ՊԼ-148) խաղին մրցավարներին փոխարինման սարքին էլեկտրոնային ցուցատախտակ չտրամադրելը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Վան» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 75-րդ կետը՝ «Վան ՖԱ» ՀԿ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

2. **02.05.2023թ.-ի «Շիրակ»-«Փյունիկ» (ՊԼ-149) խաղին 1) «Շիրակ» թիմի երկրպագուների կողմից մրցավարների հասցեին վիրավորական արտահայտություններ հնչեցնելը, 2) «Փյունիկ» թիմի երկրպագուների կողմից 1 ֆայեր պայթեցնելը, 3) 2-րդ խաղակեսի ընթացում հաշիվը ցույց տվող էլեկտրոնային լուսատախտակի անսարք լինելը, 4) տոմսային համակարգի թերի կիրառումը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

1) Հաստատված համարել «Շիրակ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 22-րդ կետը՝ «Շիրակ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 50,000 ՀՀ դրամի չափով:
2) Հաստատված համարել «Փյունիկ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 24-րդ կետը՝ «Փյունիկ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20,000 ՀՀ դրամի չափով:

   Հաստատված համարել «Շիրակ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 24-րդ կետը՝ «Շիրակ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի տասնապատիկի՝ 10,000 ՀՀ դրամի չափով:
3) Հաստատված համարել «Շիրակ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 80-րդ կետը՝ «Շիրակ ՖԱ» ՀԿ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:
4) Հաստատված համարել «Շիրակ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 74-րդ կետը՝ «Շիրակ ՖԱ» ՀԿ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

3. **07.05.2023թ.-ի «Փյունիկ»-«Վան» (ՊԼ-153) խաղի ժամանակահատվածում դաշտի տեր թիմի երկրպագուների կողմից լազերների օգտագործումը հյուր թիմի դարպասապահի ուղղությամբ**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Փյունիկ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 28-րդ կետը՝ «Փյունիկ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20,000 ՀՀ դրամի չափով:

4. **10.05.2023թ.-ի «ԲԿՄԱ-2»-«Գանձասար» (ԱԽ-174) խաղին 1) հաշվի լուսատախտակի անսարք լինելը, 2) նախախաղային խորհրդակցությանը ոստիկանության ներկայացուցիչների ուշանալը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

1) Հաստատված համարել «ԲԿՄԱ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 80-րդ կետը՝ «ԲԿՄԱ»-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:
2) Հաստատված համարել «ԲԿՄԱ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 40-րդ կետը՝ «ԲԿՄԱ»-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

5. **04.05.2023թ.-ի «Միկա»-«Ալաշկերտ-2» (ԱԽ-165) խաղին մրցավարներին փոխարինման սարքին էլեկտրոնային ցուցատախտակ չտրամադրելը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Միկա» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 75-րդ կետը՝ «Միկա ՍԱ» ՀԿ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

6. **06.05.2023թ.-ի «Արարատ-05»-«Անդրանիկ ՖԱ-05» (18Ա-068) խաղին «Արարատ-05» թիմի կողմից չհայտավորված ֆուտբոլիստ խաղացնելը,**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Արարատ-05» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 37-րդ կետը՝ թիմին գրանցել տեխնիկական պարտություն 0:3 հաշվով և «Արարատ ՖԱ» ՀՁ ՓԲԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20,000 ՀՀ դրամի չափով:

7. **03.05.2023թ.-ի «Լեռնային Արցախ ՖԱ» ՍՊԸ-ի սեփական դիմումի համաձայն «Լեռնային Արցախ-2» թիմի 2022-2023թթ. խաղաշրջանի Առաջին խմբի առաջնության հետագա մասնակցությունից հրաժարումը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Լեռնային Արցախ-2» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 3-րդ կետը՝ հիմք ընդունելով ՀՖՖ Պրոֆեսիոնալ ֆուտբոլի մրցումների անցկացման կանոնակարգի 18-րդ հոդվածի 6-րդ կետը՝ թողնել թիմի կողմից գրանցված արդյունքներն ուժի մեջ, իսկ տվյալ առաջնության մնացած հանդիպումներում «Լեռնային Արցախ-2» թիմին գրանցել տեխնիկական պարտություն 0:3 հաշվով: